

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՄԱՏԵՆԱԴՅԱՐԱՆ

ՑՈՒԼԻՍ – ԽԱԿՏԵՄՔԵՐ

(1917 թ.)

Հ Ն Թ Ե Բ Ց Ա Ր Ա Ն Ի Բ Ա Ժ Ի Ն

Ցուլիսից հոկտեմբեր՝ չորս ամիսների ընթացքում Մայր Աթոռի Մատենադարանի ընթերցարանը բաց է եղել ամեն օր առաւօտեան և երեկոյեան որոշեալ ժամերին։ Դպրոցական արձակուրդի ժամանակ լինելով՝ այս ամիսների ընթացքում ընթերցողների թիւը նախորդ ամիսների համեմատութեամբ զգալի կերպով աւելացել է. այսպէս որ ընթերցողների և պարապողների մատենանում յուլիս ամսին նշանակուել էն 365 անուններ, օդոստոսին՝ 515, սեպտեմբերին՝ 646, իսկ հոկտեմբերին՝ 650 ընդհանուր գումարը լինում է 2176. Նախորդ չորս ամիսներում ընթերցողների և պարապողների թիւը հազիւ զրա քառորդը եղել էր. պէտք է ասել, որ ընթերցարանի կանոնաւոր բացումը նոյնպէս նաևատել է ընթերցողների այնքան աւելանալուն։ Մեր ստացած հայերէն թերթերի վրայ աւելացել էն, բացի մեր արդէն յիշածներից, նոր հրատարակուել սկսող՝ Մարտիկ, Մեր Գործը, Նոր Սերունդ, Աշխատաւոր, Նեցուկ, Քայլեր, Յզատամարտ և Վերածնունդ թերթերը։

Այս տարի մինչև օրս մեր ստացած թերթերի (հայերէն և օտար լեզուներով) թիւը հասել է 65-ի. այսպէս. Ազատամարտ, Ազգագրական հանդես, Աղբիւր, Աշխատաւոր, Գալափար, Գիւղատեսիս, Համբաւաբեր, Հայաստան, Հասկեր, Հովիս, Հորիզոն, Մշակ, Նոր սերունդ, Պայշտար, Վաճ-Տոսպ և Տարագ 16 հ. (Թիֆլիս). Աշխատամիք (Երևան), Ապառաժ, Նեցուկ, Փայլակ, (Շուշի), Արարատ (Էջմիածին), Արեւ, Բանելոր, Դործ, Թատրոն եւ եռաժետուրիւն, Մեր գործը, Սոցիալ-Խեմակրաս (Բաղու), Ժայռ և Մարտիկ (Ալէքսանդրապոլ), Կարիք (Արմաւիր), Քայլեր (Դանձակ), 15 հ. (Կովկասի զանազան քաղաքներում). Ալզ (Թաւրիդ), Ազգ, Ասպարեզ, Երիտասարդ Հայաստան, Կոչիսկ, Հայրենիք, Պահակ (Ամերիկա), Արեւ, Միուրիւն, Յուսաբեր (Եղիսպուս), Արմենիա, Արձական Փարիզի. Վերածնունդ (Ֆրանսիա), Բազմավկալ (Վենետիկ). 14 հ. (արտասահման). ոռուսերէն, գերմաներէն, անգլիերէն և իտալերէն 20 հ. գումարը 65; Բացի Տաճկաստան հրատարակուող թերթերից, որը ստանալու հնարաւորութիւնից

դրկուած ենք այժմ, այստեղ կովկասում և արտասահմանում հայերէն լիզուով հրատարակուող թերթեր կան, ինչպէս իմանում ենք յայտարարութիւններից, որ էջմիածնում չեն ստացւում. որ. Աօխոտաւորի դրօւակ, Առողջ կեանք, Բանւորի կոփւ, Կեանք, Միութիւն (Թիֆլիս և Կարս), Նոր բողբոջ, Նոր կեանք, Նոր ձայն, Շարժում և այլն:

ՏՊԱԳԻՐ ԳՐՔԵՐԻ ԵՒ ՄԱՄՈՒԼԻ ԲԱԺԻՆ

Այս ամիսների ընթացքում բացի միարանութեան անդամներից և ձեմարանի ուսուցիչներից՝ դուրս տանելու համար գըրքեր ենք տուել նաև եղած մասնաւոր գիմումի և կարդապրութեան համաձայն Արևմտահայ Ուսուցչական Միութեան էջմիածնի ճիւղի անդամներին: Այսպէս այս չորս ամիսների ընթացքում դուրս ենք տուել 345 հատոր գրքեր և պարբերականներ հայերէն և օտար լիզուներով 52 տարբեր անհատների, որից 72 հատորը տուել ենք միարանութեան 12 անդամներին, 106 հատորը ձեմարանի ուսուցիչ և ուսանողներին (մասնաւոր երաշխաւորութեամբ). 111 հատորը Արևմտահայ Ուսուցչ Միութեան 16 անդամներին, և 54 հատորը գրսից 14 անձերի (մասնաւոր երաշխաւորութեամբ). այս բոլոր գրքերից 15 հատորը զեռ չի վերադարձել Մատենադարան: Բացի դուրս տրուած գրքերից ամեն օր ընթերցաբանում կարդալու համար տուել և ստացել ենք գրքեր և պարբերականներ օրական 10—15 հատոր. զլիսաւորաբար ձեմարանի տաճկահայ սաներին:

Ցուցակագրութիւն.—Ցուցակագրութեան գործը այս ամիսներին կատարել ենք օտարազգի գրքերի վրայ՝ ոռւսերէն, զերմաններէն, Փրանսներէն և անգլիերէն: Այս առիթով պէտք է յիշել, որ երեք տարի առաջ 1914 թ.-ի աշնան օտարադրի գրքերի ցուցակագրութեան ձեռնարկուելով գերմաններէն գրքերի ցուցակագրութիւնը—ըստ հեղինակների—կատարեց պլ. Սենեքերլիմ Տ. Յակոբեան, Փրանսներէն գրքերը պլ. Աշոտ Յովհաննիսեան, և անգլիերէն գրքերը՝ Սարգիս Թոփիալեան: Այժմ այդ բոլորի համար ցուցակներ կազմեցինք ըստ համարակարգութեան յատուկ մատեանի մէջ, և վերջին երեք տարիների ընթացքում ստացուած գրքերը աւելացրինք: Խսկ ոռւսերէն գրքերի միայն համարները կպցըած էր, որի ցուցակագրութիւնը ըստ հեղինակների և ըստ համակարգութեան կատարուեց այս ամիսների ընթացքին:

Այստեղ աւելորդ չհնք համարում մեր ունեցած բոլոր ցուցակների ցանկը դնել:

1. Ցուցակ հայերէն տալ. գրքերի ըստ համարակարգութեան

2. » » » » » հեղինակների*)

3. » » » » » այբբնական կարգով ըստ
նիւթի՝ վերնագրի:

4. » » մամուլի

5. » ոռւսերէն տպ. գրքերի ըստ համարակարգութեան

6. » » » » ըստ հեղինակների

7. » » պարբերականների.

8-10. » գերմաներէն, ֆրանսերէն և անգլիերէն գրքերի
ըստ համարակարգութեան մի մատեանի մէջ

11. ցուցակ ֆրանսերէն գրքերի ըստ հեղինակների.

12. » գերմաներէն » » »

13. » անգլիերէն » » »

14. » հայերէն աւելորդ գրքերի օրինակների:

1. Մատեան՝ ստացուած գրքերի ժամանակագրական կարգով

2. » մատենադարանից դուրս տրուած գրքերի

3. » անուանց պարապողների և ընթերցողների:

Դեռ ևս չցուցակագրուած մնում են լատիներէն, յունարէն,
երրայեցերէն, ասորերէն, իտալերէն, լեհերէն, վրացերէն, պարսկական, թուրքերէն և արարերէն գրքեր. բոլորը մօտ 400 հատոր.
Կան նաև քիչ քանակութեամբ եւրոպական լեզուներով պարբերական հրատարակութիւններ: Այս բոլորից յիշոյ մեզ մնում է ունենալ մեր առանձին մթերանոցի բաժինը, ուր պէտք է փոխադրենք յատուկ ցուցակով մեր ունեցած բոլոր գրքերի և թերթերի աւելորդ օրինակները, որոնց մի մասը (հայերէն գրքերի աւելորդ օրինակներ) մասամբ ցուցակագրուած է:

Այս ութ ամսուայ միջոցին մօտիկից ծանօթանալով Մ. Ա. Մատենադարանին, և տպագիր գրքերի բաժանմունքը որոշ չափով կարգի դնելով, այժմ ի վիճակի ենք մեր երկրորդ գեկուցման մէջ յիշած մինչև օրս անյայտ մնացած կէտը մասամբ պարզեւ այն է ցոյց տալ թէ Մայր Աթոռի Մատենադարանը իր բոլոր ունեցածովը քանի՛ հազար հատորի հարստութիւն ունի: Այս մասին մօտաւոր գաղափար տալու համար դնում ենք հետեւալ թիւերը:

Տպագիրների բաժին.—

Հայերէն գրքերի ցուցակի վերջին №-ն է 6285, աւելի դըր-

*) Բոլոր ըստ հեղինակների ցուցակները եերթիկների վրայ են (карточная система).

ուած օրինակներով, հատորներով և միասին կազմած գրքերով						
կլինի աւելի քան	6600					
Խուսերէն գրքերի ցուցակի վերջին №-ն է 3900 նոյն-						
պէս աւելի դրուած օրինակներով կլինի աւելի քան 4000						
Ֆրանսերէն գրքերի ցուցակի վերջին №-ն է 645, այս-						
տեղ համարներ կան, որոնց տակ դրուած են						
2, 3. նոյնիսկ 10 հատոր գրքեր. ուստի բոլորը						
կլինի մօտ	800					
Գերմաներէն գրքերի ցուցակի վերջին №-ն է 566.						
նոյնպէս բոլորը կը լինի մօտ	700					
Անգլիերէն գրքերի ցուցակի վերջին №-ն է 136. բոլորը						
կլինի	150					
Հայերէն թերթերի (կանոնաւոր ցուցակագրուած) լրիւ						
և պակաս տարիներ աւելի քան	1700					
Խուսերէն պարբերականներ (ցուցակագրուած) լրիւ						
և պակաս տարիներ մօտ	300					
Լատիներէն, յունարէն, իտալերէն և այլ գրքեր, ինչ-						
պէս վերև յիշուեց դեռ ևս չցուցակագրուած	400				
Էնցիկլոպեդիաներ և եւրոպական լեզուներով բառա-						
րաններ	200					
Կովկասագիտական գրքեր առանձին սէրիաներով մօտ	100				
Եւրոպական լեզուներով պարբերականներ	100					
Քարտէղ և ատլաս	125					
Կոնդակներ (Մակար կաթուղիկոսի)	125					
Ալբոմ և պատկերներ*	150				
Մայր Տաճարի յատակապիծ 10 տեսակ	450					
Հայերէն գրքերի աւելորդ օրինակներ (մասամբ ցու-						
ցակագրուած) աւելի քան	3200					
Հայերէն մամուլի աւելորդ տարիներ մօտ	400					
Խուսերէն գրքեր, պետ. գումայի արձանագրութիւն-						
ներ, հաշիւներ, ցուցակներ. և աւելորդ գրքեր						
եւրոպական լեզուներով մօտ	500					
Բոլորի գումարը լինում է 20,050						

Ուրիշն Մայր Աթոռի Մատենագարանի միայն տպագիրների բաժինը ունի այլ և այլ լեզուներով (Հայերէն, ոռւսերէն, Փրան-

*) Քարտէղների եւ պատկերների թիւը համեմատաբար շատ նշին է. որովհետեւ այդ մասին առ անմին խնամք չի տարուել բոլորը մի տեղ հաւաքելու: Նկարների թիւի մէջ չն մտնում պատկերի վրայ ցուացագրուած պատկերներն ու նկարները, որոնց թիւը հասնում է 70-ի, եւ որոնցից մի քանիսը շատ թանկապին են եւ տամնեակ հաղարծներ արժեն:

սերէն, գերմաներէն, անգլիերէն, իտալերէն, լատիներէն, յունարէն, երայեցերէն, ասորերէն, պարսկերէն, արաբերէն, թուրքերէն, վրացերէն, լեհերէն և այլ եւրոպական լեզուներով) տւելիքան քսան հազար (20,000) հատոր:

Զեռագիրների բաժին. —

Մայր Աթոռի Մատենադարանի հարստութեան և համբաւի աղբիւրը ձեռագիրների բաժինն է. պատերազմի պատճառով բռնոր ձեռագիրները ժամանակաւորապէս փոխադրուած են Մոսկվա. (1915 թ. փետր. 3.ին) և այժմ գտնւում են այնտեղ: Զեռագիրների բաժնի մասին մեր այս զեկուցման մէջ այսքանը կասենք, որ Մոսկուա ուղարկուած 101 արկղ ձեռագիրների թիւը նշանակուած է՝ հայերէն 4660, պարսկերէն 232, նոյնպէս կոնդակներ և պարսկական ու թիւրքական հրովարտակներ, որոնց թիւը մեղյայտնի չէ: Իսկ այժմ Մատենադարանում ունենք Տաճկահայատանից բերուած (Վան, Վարագ, Աղթամար, Լիմ, Կոուց, Մշոյ և. Կարապետ). 1526 ձեռագիրներ. և Մայր Աթոռի Մատենադարանի անունով նուէր ստացուած 10—15 ձեռագիրներ:

Զեռագիրների բաժնում մենք պէտք է առանձին մաս ուշնենանք ժամանակակից նոր ձեռագիրների համար, որոնք զեռ և չեն կարգաւորուած:

Այսպէս՝ թողնելով Տաճկահայատանից եկած ձեռագիրները, Մայր Աթոռի Մատենադարանը ունի իր սիփական ձեռագիրները մօտ 5000 հատոր հայերէն և պարսկերէն:

Սրանք են ներկայումս մեր տրամադրութեան տակ եղած թիւերը Մայր Աթոռի Մատենադարանի հարստութեան վրայ մօտաւոր գաղափար տալու համար, մնում է ապագային տպագիրների և ձեռագիրների բաժինները վերջնականապէս կարգի գնելուց և մեր աշխատանքը աւարտելուց յետոյ ճիշտ և որոշ կերպով նշանակել այդ թիւերը:

Կազմ.—Այս ամիսներին կաղմելու զրկած մեր գրքերից և թերթերից այժմ կտղմատանը մնում են 49 հատոր թերթերի ժողովածուներ, և 192 հատոր հայերէն և ուստերէն գրքեր:

ԶԵՐԱԳԻՐՆԵՐԻ ԲԱԺԻՆ

Ցուլիս և օգոստոս ամիսներին ձեռագիրներով պարագող չի եղել, սեպտ. և հոկտ.-ին պարագել են միաբանութեան անդամներից երկու հոգի և զրսից մի հոգի (նկարիչ), որոնց համար տրամադրել ենք աւելիք քան տասը ձեռագիր:

Ստուգելով 8աճկահայատանից եկած ձեռագիրները բոլորն էլ պտել ենք լրիւ, եղած ցուցակի համաձայն պակաս չկայ. ընդ-

հակառակը հանել ենք 7 ձեռագիր աւելի դրուած լինելով (մի համարի տակ երկու ձեռագիր), ցուցակի վերջին հ.ն է 1526:

Մեր նախորդ զեկուցման մէջ յիշատակած դուրսը գտնուող չորս ձեռագիրներից մէկը № 513 Գէորգ եպս.-ին արուած «Դատաստանագիրք Ալաւելայ որդու» ստացել ենք:

* *

Ալցելողներ.—

Մեր նախորդ երկու զեկուցումների մէջ նշանակել էինք Մայր Աթոռի մատենադարանը այցելող հայազգի և օտարազգի անձերի թիւը: Այս անգամ գժուարանում ենք այցելողների թիւը ճշտութեամբ նշանակել որովհետեւ գժուար է լինում մեզ մեր զրադմունքների մէջ ճշտութեամբ հետեհել այդ կէտին^{*}). ամառուայ այս չորս ամիսների ընթացքում նրանց թիւը հազարից անցել է, եղել են օրեր, որ այցելողների թիւը հասել է 20, 30, նոյնիսկ 50-ի և 100-ի, ամեն ազգի և ամեն դասակարգի, մեծ մասամբ զինուորականներ:

Էջմիածին այցելող օտարակամների համար առանձին հետաքրքրութեան առտրկայ է լինում Մայր Աթոռի Մատենադարանը, իր ունեցած գրքերով, նկարներով և յատկապէս նկարազարդ հայկական ձեռագիրներով. բաւարարել այդ բոլորի հետաքրքրութիւնը տալով իւրաքանչիւրին հարկ եղած բացատրութիւնները, խլում է մեր ժամանակի մի զգալի մասը, բայց մենք անհրաժեշտ ենք համարում այդ, ծանօթացնելու համար յատկապէս օտարազգիներին հայ արուեստի փառաւոր անցեալը, որը իրաւամբ արժանանում է նրանց անհուն հիացմունքին:

ԱՏԱՅՈՒԱԾ ԶԵՌԱԳԻՐՆԵՐ ԵՒ ԳՐԻԵՐ.

Յուլիս ամսից մինչեւ օրս Մայր Աթոռի Մատենադարանում ստացուել են նուէր հետեհեալ ձեռագիրները և գրքերը:

*) Պարագողների և ընթերցազների մատեանի նման կարող էլնը եւ այցելողների համար էլ մի յատուկ մատեան դնել, ուր նրանք նշանակեին իրենց անուն-ազգանունը, վայրը, դրադմունքը եւալին: Բայց գործնականի մէջ գժուարութեան է հանգիպում այդ. որովհետեւ այցելողները շատ անգամ գժուարութեան էն կամ ժամանակ չեն ունենում կատարել այդ. իսկ կիսկատար եղածը ո՛չ մի արժեք չունի:

I. ԶԵՐԱԳԻՐՆԵՐ.

Ա. Գրիգորիովովի հայոց ծխառէր Յարութիւն քահանայ Տէլ-Ենօքեանից.

1. Չեռագիր խորհրդատետը.

Նիւր՝ թուղթ 29 թերթ — մեծութիւն՝ $27 \times 20 \times 2$, կազմ՝ կաշի — զիր՝ բոլորագիր. — գրութիւն՝ երկսիւն. — գրիչ՝ Յովհաննէս, տեղ՝ «ի յերկիրս հոնաց որ այժմ կոչի Ղրիմ, ի գիւղաքաղաքիս Ղարասու ընդ հովանեաւ ո՞ր Օգուզնու տաճարիս» բուական, սճժը = 1669 թ.

2. Մանուէլ վարդ, Կիւմիւշանեցու Գրիգորիովովի և Ղրիմի յաջորդ եղած ժամանակ այլ և այլ վայրերից (սուրբ և աչ վանք, Ղարասու-պաղար, Էսկի Ղրիմ քաղաք, Մոսկուա, Պետերբուրգ) Գրիգորիովովի հայոց հոգևոր կառավարութեան իր իսկ ձեռքով գրած 64 հրամանգրութիւնները, 1812 թ. — 1 հատ, 1813 թ. 6 հատ (որից երկուսը գրուած է Եախիջևնից առաջնորդ Յովհաննէս արքեպիսկոպոսից, 1814 թ. — 9 հ., 1818 թ. 18 հ., 1819 թ. — 8 հ., 1820 թ. — 5 հատ, ընդամեննը 115 գրուած թերթ:

Մանօք. Թէ՛ խորհրդատետքերը եւ Թէ՛ զրութիւնները հանուած են Գրիգորիովովի (Խերսոնի նահ.) հայոց հոգևոր կառավարութեան դիւանից: Բ. Վեհագուռ Կաթուղիկոսի Դիւանի թիւ 1519 և 8-ն սեպտ.

1917 թ. գրութեամբ ստացուել են Մեսրոպ վ.-ի (Մաքսուղեանց) Գրիգորիովովի հայոց եկեղեցուց բերած երկու ձեռագիր խորհրդատետքերը:

1. Չեռագիր խորհրդատետը.

Նիւր՝ թուղթ 35 թերթ. — մեծութիւն՝ $27 \times 19 \times 1$, կազմ՝ կաշի (առանց ամուր կարտոնի). — զիր՝ բոլորագիր. — գրութիւն՝ երկսիւն, ունի գարդագրեր և լուսանցաղարդեր, յիշատակարան՝ չունի. հաւանօրէն ժիշ. զարի գրած:

2. Չեռագիր խորհրդատետը.

Նիւր՝ թուղթ 12 թերթ. — մեծաւթիւն՝ $25 \times 17 \times 1$, կազմ՝ չունի. — Գիր՝ բոլորագիր. — գրութիւն՝ երկսիւն. — գրիչ՝ ղաքարիս երէց. — տեղ՝ անյայտ. — բուական՝ սճժը = 1680 թ. սկզբից պակաս:

II. ԳՐՑԵՐ ԵՒ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐ.

Ա. Հայրապետական գիւանից ստացուել են

1. Անգլիական Կապոյտ գիրք, բնագիր-անգլիերէն.

2. Անդիական կապոյտ գիրք, Փրանսերէն թարգմանութ.
3. M. Varandian, L'Arménie et la question Arménienne. Laval 1917
4. The New Armenia, Ararat & Armenia թերթերի 1915—1917թ. համարները
5. Գեղարուեստական կոնցակների լուսանկարներ 1) յառնուն լէոպոլգ Ֆաւրի, Ժընև 2) Անատօլ Ֆրանսի, Փարիզ և 3) Վիկտոր Բերարի, Փարիզ:
- Բ. «Արարատ» խմբագրութիւնից ստացուել են
1. Բերթա Թօն Զուտնէր, Զէնքերը վար. Ա. և Բ. հատոր թրգմ. Բօստոն 1916թ.
 2. Մանկավարժական ժողովածու Ներսիսեան դպրոցի 1917թ. շ. շրջանաւարտների, Թիֆլիս 1917թ.
 3. Վ. Վալագեան, Ռազմական պատկերներ. Թիֆ. 1917թ.
 4. Գ Էդիլեան, Գաղթականական որբանոցներ » » »
 5. Ս. Քայլեանց, Հայը Ցովքի օրում. Թիֆ. 1917թ.
 6. Սիմ. Սիմէոնեան, Բանաստեղծութիւններ I. Շուշի 1917թ.
 7. Արշալուս, գրական ալմանախ № 1. 1917 Թիֆ.
 8. Սուրէն Մէլիքեան, Հայ կամաւորի յուշերից. Թիֆ. 1917թ.
 9. Տեղեկագիր Հայ Նպաստամատոյց ընկ. 1915—16թ. Թիֆ. 1917թ.
 10. J. Alcard, Arménie. Venise 1917
 11. С. Я Шарти, Армянские поэты. Тифлисъ 1917 г.
- Գ. Նոր-Չուղայիցի պ. Ղազարոս Մարտիրոսեանից
1. W. Morgan Shuster, The strangling of Persia. London 1913
- Դ. Արակն վարդապետ Կտձեանից
1. L. Velbert, Une femme en prime. Paris.
- Ե. Ճեմարանի սան Արա Գարագաշեանից
1. «Մշակ» 1916թ. նոյեմբ.—դեկտ. 1917թ. ապրիլ.
- Զ. Հայկ Աճէմեանից, Ծաղկաքաղ Վասպուրականի հայ ժողովը՝ դական բանահիւսութեան, I. փունջ. էջմ. 1917թ.
- Է. Ճեմարանի սան Առաքել Առաքելեանից
1. Ալֆօնսո տէ Լիկօր եպս., էպէտիլիյէ տայիր նասինաթլէր. Վենետիկ 1839 (հայատառ թուրքերէն)
- Ը. Արել Արեգայից, Ժընև. Ցուսիկ արքեպիսկոպոսի միջոցով
1. A. Abrahamian, Die Grundlagen des armenischen Kirchenrechts. Zürich 1917.
- Թ. Հայր Գալուստ Տ. Մկրտչեանից
1. La revue des idées. Paris. 1905—1906, № 15, 17, 25—29.
 2. L' Astronomie. Paris 1892 № 6.

3. «Մուրճ» ամսագրի 1901 և 1902 տարիների համարներից 8 հ.:
 4. «Բազմավիճակ», 1884—5, 1887, 1889—1895 տարիների համարները (ոչ լրիւ):
 5. «Լումայ», 1896, 1898—1901, 1903, 1906—7 տարիների համարներից 9 հ.:
 6. Աղքիւր, Արօր, Աւետարեր, Բիւրակն, Բողբոջ, Եփրատ, Ժողովարդին բեմը, Իկոնիոն, Լուսարեր, Լուսրան, Կոչնակ, Հայ զրականութիւն, Յուսարեր, Նոր դպրոց, Փարոս և Տարազ թերթերի մեջ. համարները:
 7. «Հորիզոն» 1916 թ. (լրիւ) «Մշակ» 1916 թ. սեպտ.-դեկտ. և 1917 թ.
 8. Գ. Տէր-Մկրտչեան, Անանիա Շիրակացի, Վաղարշ. 1896 թ. (3 օրինակ)
 9. Գ. Տէր-Մկրտչեան, Յովհան Մանդակունի Վաղարշ. (1 օր.) 1903 թ.
 10. Գ. Տէր-Մկրտչեան, Ղաղար Փարակեցու ձեռագրերը, Վաղարշ. 1901 թ. 2 օրին.
 11. Գ. Տէր-Մկրտչեան, Փաւատոսի ձեռագրերը, Մարրուրդ 1904 թ. 1 օրինակ.
 12. Գ. Տէր-Մկրտչեան, Տիմօթէոս Խուզի հականառութեան հայ. թարգ. ժամանակը... Վաղարշ. 1908 թ. 1 օրինակ.
 13. Գ. Տէր-Մկրտչեան, Էլ. Մելլիւ, Լաղիստան, Հայտատան և Քուրդիստան, թարգ. Միաբան, Վաղարշ. 1893 թ. 1 օր.
 14. Գ. Տէր-Մկրտչեան, 1896 թ. էջմ. գտնուած հին պղընձեղն ամանների ցուցակը և արձանագրութիւնները, Փարիզ 1906 թ. 1 օրինակ.
 15. Օ. Գալուստъ, Замѣченія на статью И. А. Орбели. «Багаванская надпись 639 г. . . .». СПБ. 1915.
- Ժ. Մեսրոպ վարդապետ Մաքսուդեանից**
1. W. Streitberg, Gotisches Elementarbuch. Heidelberg 1910.
 2. Mémoires de la Société de linguistique, t. XIX. 2—6 պրակները, Paris 1916.
 3. Նոյն, t. XX. առաջին երեք պրակները, Paris 1916.
 4. O. Jespersen, Phonetische Grundfragen, Leipzig—Berlin 1904
 5. O. Jespersen, Lehrbuch der Phonetik. Leipzig—Berlin 1913
 6. Sehiller, Sämtliche Werke in 12 Bänden. 4 հատորների մէջ, Leipzig.
 7. H. Heine, Sämtliche Werke in 12 Bänden, 4 հատորների մէջ, Leipzик.
 8. A. Thumb W., Streitberg, Indogermanisches Jahrbuch I. 1913, Strassburg 1914.

9. Θ. Μ. Σαμονένκο, Τίτλος δεκλαματόρος. Τ. I, II, III. IV, Κίεβη 1909—1913 γ. γ.
10. Հ. Աճառեան, Classification des dialectes Arméniens, Paris 1909.
11. H. Oldenberg, Le Bouddha, Paris 1903.
12. Ա. Յովհաննիսեան, Israel Ory, München 1913.
13. Հայկ Յովհաննիսեան, Des literarische Porträt der Armenier, Ro'tha 1912.
14. Տօքթ. Յ. Թիրեաքեան, Արտաշիր Բարական Կարնամակ, թարգ. Փարփ 1907.
15. Նոյն, թարգմ. Շահնամակ Ֆիրտուսի, Նիւ-Յօրք 1909.
16. Օտար փունջեր, հանդէս Ա. զիրք. Թաւրիզ 1913.
17. A. Meillet, Les dialectes grecs, Paris 1910.
18. » » Remarques sur le tête de Agathange, Paris 1911.
19. » » Remarques linguistiques, Paris 1911.
20. » » Remerques sur les 1 de l'armeniu classique, Wien 1911. Յուշարձան № 8.
21. E. Lidén, Ein Beitrag zur armenischen Lautgeschichte, Wien 1911. Յուշարձան № 36.
22. Միսակ Խոստիկեան, Devid der Philosoph, Bern 1907.
23. Fink, Lehrbuch der neuostarmenischen litteratur—sprache, Վաղ.—Marburg 1902.
24. Հ. Ակինեան, Յովհ. Օձնեցւոյ նորադիւտ դրուածք մը Բանին մարմնաւորութեան վրա, Wien 1911. Յուշ. № 29.
25. Մ. վ. Մաքսուլեանց, Զէյթունի բարբառի ձայնական դրութիւնը, Wien 1911. Յուշարձան № 25.
26. Ազգագրական հանդէս XXIV զիրք, 1913 № 1.
27. Յովհ. Գաղաճեան, Եւդոկիոյ հայոց գաւառաբարբառը, Վիեննա 1899.
28. Գ. վ. Յովհէֆեան, Թովմտ մեծովիցու կեանքը, Վարշավա 1914.
29. Դր. Ղափանցեան, Լեզուաբանական դիսցիլինաներ և լեզու, Վաղ. 1914.
30. Գեօթէ, Հերման և Դորոթէա, թարգ. Յ. Պետրոսեան Վաղ. 1904.
31. Հոմերոս, Հեկտորի և Աքիլլէսի կոփւը, թարգմ. Յ. Պետրոսեան, Վաղ. 1908.
32. Провозвѣстіе Рамокришны, СПБ. 1914.
33. Йогъ Рамачарака, Пути достиженія, II изданіе СПБ. 1914
34. Թ. Թորամանեան, Տեկորի տաճարը, Տիֆլիս 1911 թ.

35. R. Pischel, Leben und Lehre des Budha, Leipzig 1910.
36. Exposé des principes de l' Association Phonétique Internationale, Leipzig? 1908.
37. P. Passy, Les sons du français, Paris 1906.
38. Առաջ յունարէն արդի բանաստեղծութեան ժողովածոյ,
Աթէնք 1910.
40. Թուրքերէն բառարան, հեղինակ Մուալիմ Նանի, պոլիս-
41. Ch. D. Bysantius, Dictionnaire Grec-français et Francais-Grec. Athènes 1856.
42. A. Meillet, De quelques évangéleres arméniens accentués, Paris 1905.
43. A. Meillet. Différenciation et unification dans les langues, Bologna 1911.
44. A. Meillet, L'évolution des formes grammaticales, Bologna 1912.
45. A. Meillet, Le problème de la parenté des langues Bologna 1914.
46. » » Aperçu d'une histoire de la langue Grecque, Paris 1913.
47. Հ. Աճառիեան, Les explosives de l'ancien Arménien étudiées dans les dialectes modernes, Paris 1890.
48. Եր. Լալայեան, Մարգարիտներ հայ բանահիւսութեան,
Ա.-Գ. գիրք Էջմիածին 1913.
49. A. Loiseleur-Deslangchamps, Lois de Manou, Paris.
50. Ն. Վ. Տէր-Միքայէլեան, Fink u. seien kritik über Das armenische Hymnarium, էջմի. 1908.
51. Մ. Արեգեան, Գրաբարի համառօտ քերականութիւն,
Վաղ. 1907.
52. Thomas Moore, The poetical works. London—New-York.
53. F. Kielhorn, Grammatik der Sanskrit-Sprache, Berlin 1888.
54. Goethe, Goethes Werke, in 16 Banden, 1—4,
9—12, 13—16, Leipzig.
55. Molière, Oeuvres complètes, avec notices sur chaque comédie par Charles Louandre, tomes I—VIII, Paris.
- ԺԱ. Հանդուցեալ կարապետ Դելիսկոպոսի զրքերից ստացուել են
հետեւաները (Բագուից).
1. Համարարառ, Երուսաղէմ 1895.
 2. Շնորհալի, Թուղթ ընդհանրական, Էջմ. 1865.
 3. Հ. Գարբ., Հայկական թարգմանութիւնք նախնիաց,
Վենետիկ 1889.
 4. Պրօֆ. Վ. Յակոբեան, Բառարան անդղ.—հայ. Պո-
լիս 1907.

5. Ա. վ. Ամասունի, Հայոց բառ ու բան, Վաղ. 1912.
6. Գրիգոր Օտեան, Ճառեր, Պօլիս 1910.
7. Կնիք հաւատոյ, Էջմ. 1914 թ. (2 օր.)
8. Արէլ արք. Մխիթարեան, Պատմութ. ժողովոյ հայ. եկեղեցւոյ, Վաղ. 1874.
9. Տեղեկադիր Կով. Հայ. Բարգ. ընկ. 1913 թ., Թիֆլ. 1914.
10. Տիմոթէոսի հակածառութիւն, Էջմ. 1908 թ.
11. Եր. վ., Հայոց եկեղեցու վերանորոգութեան ինդիբը, Թիֆլ. 1910 թ. (2 օր.).
12. Նորայր, Հայկական բառաքննութիւն, Պօլիս 1880 թ.
13. » Քննութիւն Մալիս. հրտ. Ազաթանգեղոսի և Ղ. Փարպեցւոյ, Վիեննա 1911 թ. Յուշարձան № 2.
14. Եղ. ա. ք. Գեղ., Խորայէլ Օրին և իր քաղաքական ծրագիրը, Բագու 1914 թ. (2 օր.).
15. Եր. վ. Յիսուսի կեանքն ու գործունէութիւնը, Էջմ. 1909.
16. Յ. Գ. Մըմրեան, Ալէլուիա, Պօլիս 1908.
17. Կ. Կոստանեանց, Յովհ. Թէկուրանցին և իւր տաղերը, Թիֆլ. 1892.
18. Բարգէն եպս. Իլւէսէրեան, Հայ. եկեղեցին V դարու մէջ, Պօլիս 1912 թ.
19. Դոկ. Յովհ. Արթիհան, Աստուածաշունչի տունկերը, Պօլիս 1913.
20. Մ. Խոստիկեան, Ի՞նչ է Աստուածաշունչը, Թիֆլ. 1913.
21. » Սըրազան պատմութ. Խորայէլի Թիֆ. 1913 թ.
22. Խորէն ք. Խուցեան, Մարգարէներ, Թիֆ. 1913 թ.
23. Բնդարձակ գրացուցակ Պ. Պալեանց գրատան, Պօլիս 1912 թ.
24. Полное собр. сочинений Л. Н. Толстого, Москва 1993. Т. XIII—XVI, XVIII—XXIV, (11 հատոր).
25. Календарь (Армяно-Григорианский), Ставроп. 1912 г.
26. The works of William Shakespeare in VII volumes, vol. I—V, VII, (առաջ. VI) Leipzig 1868.
27. S. G. Wilson, Bahaiism and its claims, New York 1915.
28. J. E. Wessely, Pocket dictionary of the English German languages, Leipzig 1893.
29. The New Testament, Cambridge 1881.
30. J. B. Nicolas, Dialogues persans—français, Leide (Holland).
31. Novum Testamentum, Berolini 1886 (լատ.).
32. Novum Testamentum Graecæ, Lipsiae 1888 (յուն.).
33. Liber duodecim prophætarum, textum masoreticum, Linsiae

1878 (ժամանիթ.).

34. Biblia Hebraica, Lipsiae **1890 (հրբայից լրէն).**
- 35—45 Պարսկերէն զրքեր.
46. Die Heilige Schrift (պատկերադարդ), մեծաղիր Leipzig **1882.**
47. Die Bibel, Dresden.
48. Die Heilige schrift des Alten Testaments I, Freiburg i/B **1820.**
49. Griechisch-deutsches Wörterbuch, I—II Leipzig **1886.**
50. Hebräisches Wörterbuch zum Altin Testamente, Leipzig **1893.**
51. Leteniseh-deutsches schulwörterbuch, Leipzig **1887.**
52. Geschichte der altchristlichen Literatur H. Jordan, Leipzig **1911.**
53. Hand-Commentar zum Neuen Testament I, II, Freiburg i/B **1889.**
54. Fr. Baethgen, Die Psalmen übersetzt und erklärt, Göttingen **1892.**
55. F. Kattenbusch, Lehrbuch der vergleichenden Confessions-Kunde I, Freiburg i/B **1892.**
56. R. Falckenberg, Geschichte der neneren Philosophie, Leipzig **1892.**
57. Christliebe, Handbuch der evangelischen Religionslehre, Leipzig **1894.**
58. System der Ethik. I. Berlin **1894.**
59. O. Pank, Des Evangelium Matthäi I, II, Bremen-Leipzig **1892.**
60. Dryander, Das Evangelium Marci I, II, Berlin-Leipzig **1892.**
61. Z. Kaften, Dogmatik, Freiburg i/B **1897.**
62. Hilfsbuch für deu Religionsunterricht, Berlin **1904.**
63. Bornemann, Unterricht im Christentum, Göttingen **1893.**
64. Klein, Biblische Geschichte **1902.**
65. H. Weingarten, Zeittafeln n. Überblicke zur Kirchengeschichte, Leipzig **1891.**
66. Klein, Biblische Geschichte für d. ersten schuljahre **1904.**
67. Kurtz, Lehrbuch d. Kirchengeschichte I, II, Leipzig **1892.**
68. Meyer, Über den Brict des Paulus au die Römer, Göttingen **1872.**
69. Fr. Loofs, Dogmengeschichte I, II, Halle A/S **1890.**
70. » » Symbolik oder christliche Konfessious Kunde I, Tübinden—Leipzig **1902.**

71. B. Jonas, Lehrbuch für den evangelischen Religionsunterricht, Königsberg **1896**.
72. W. Herrmann, Ethik Tübingen—Leipzig **1901**.
73. Z. Weilhansen, Die Kleinen Propheten übersetzt, mit Noten, Berlin **1893**.
74. B. Moerner, Inshallah türkische impressionen Se Frankfurt a/M. **1908**.
75. H. Jordan, Armenische Icenausfragmente... Leipzig **1913**.
76. Եր. Տիկանեան, D. Arm. Kirche in ihren Beziehungen zu den syrischen Kirchen, Leipzig **1904**.
77. Haupt, Religionsbuch II. Tübingen **1904**.
78. Gibson-Günther, Was ist Elektrizität Stuttgart **1911**.
79. W. Raabe, Der Hunger pastor, Berlin **1911**.
80. Akunian, Schreie, Berlin **1901**.
81. W. M. Förster, Alt-Heidelberg, Berlin **1911**.
82. Frommel, Charakterbilder, Bremen **1895**.
83. O. Funcke, Der Wandel vor Gott, Bremen **1890**.
84. O. Funcke, Brot und Schmert, Bremen—Leipzig **1889**.
85. » » Neue Reisebilder und Heimatklänge Bremen **1892**.
86. G. F. Meyer, Die Hochzeit des Mönchsi Novelle, Leipzig **1908**.
87. Salemann Shukovski, Persische Grammatik, Berlin **1889**.
88. E. Nestle, Syrische Grammatik, Berlin **1888**.
89. Das Neue Testament, Freiburg—Leipzig **1892**.
90. Homer, I. Ilias—II. Odysse von Z. H. Botz. Leipzig.
Բոլոր նուիաբարերողներին յայտնւում է խորին շնորհակալութիւն:

Մատենադարանապետ՝ Դեսպան,

Մատենադարանի պաշտօնեայ

Սարգիս Զ. Թովմայեան

4 նոյեմբերի 1917 թ.